

Անտերության կեղեքող զգացումով

Անունս Միքայել է, ազգանունս՝ Հակոբյան: Հերոսական Կարաչինարից եմ, որ թողեցինք խայտառակաբար: Համարյա 40 տարվա վարորդ եմ, ասել է թե՛ անգիր գիտեմ լեռնաշխարհիս ճանապարհների յուրաքանչյուր սանտիմետրը: Բայց ի՞նչ օգուտ, մեր ճանապարհները, մեր սարերը որբացան: Մենք կորցրինք մեր անկրկնելի հայրենիքը: Ինչո՞ւ, ինչո՞ւ կորցրինք, ո՞ւմ մեղքով: Այս հարցերն այրում են ուղեղս, հազարավոր շահումյանցիների պես իմ միտքն էլ մոլորված է, սիրտս՝ խոցված...

Հունիսի 18-ի այն օրն էլ, ինչպես բազում անգամներ, Կարաչինարը հրետակոծվեց և գրադակոծվեց: Մեր տունը գյուղի ծայրին է, ադրբեջանական Շեֆեկ գյուղից մի 200 մետր հեռավորության վրա: Հենց տան բակում քլինդաժամման մի բան էինք սարքել, այնտեղ էինք պատսպարվում հարևաններով: Երբ հրետակոծությունը վերջացավ, գետնի երես ելանք և ինչ տեսնենք՝ ֆիդայիները հեռանում են գյուղից: Տարօրինակ էր: Իմ հարցին, թե ի՞նչ է պատահել, նրանցից մեկը, թե՛ թուրքերն արդեն գյուղ են մտնում, հեռացեք: Չհավատացինք: Ինչպե՞ս, թշնամին մտնում է Կարաչինար: Բա ժողովուրդն ո՞ւմ հույսին է թողնվում: Բայց ով էր այս հարցերին պատասխանողը: Մնացինք մեր հույսին:

Հավաքվեցին թաղամասի ծերերը, կանայք ու երեխաներ: Տղամարդիկ, մանավանդ երիտասարդները, ինքնապաշտպանության ջոկատում էին: Ես և իմ հասակակից Ռուբեն Չաքարյանը բերել տվինք վիրավորված Արկադյա Չաքարյանին, որ հետներս տանենք: Բոլորին բարձրացրինք իմ բեռնատարի թափքը և հեռացանք գյուղից՝ ուղղություն վերցնելով դեպի Գյուլիստան: Ոչինչ չվերցրինք մեզ հետ, ո՛չ հագուստ, ո՛չ սննդամթերք: Օրեր առաջ լուրեր էին պտտվում, որ մի երկու օրով մեզ գյուղից պիտի հանեն՝ Շեֆեկը գրավելու համար:

Շատ արագ զգացինք, որ ժամանակին ենք հեռացել գյուղից: Թուրքերն այնպես փակեցին ճանապարհները, որ ոչ մի շահումյանցի, այդ թվում և ոչ մի կարաչինարցի չպրծնի նենգահյուս որոգայթից: Թուրքական տանկերը, ավելի ճիշտ կլինի ասել՝ թուրքերի համար կովոդ ուսական տանկերը Մանասաշենի տարածքով հասել էին Կարաչինարի մոտի վերջին կամրջին և փակել դեպի Վերիշեն տանող միակ, ասել է թե՛ վերջին հույսի ճանապարհը: Իմ բեռնատարը մեզ փրկեց: Իսկ մյուսները, ովքեր մնացին, ովքեր տեղի ունեցածին անտեղյակ աշխատում էին այգում, դաշտում: Անակնկալի գալով, նրանք փորձում էին հեռանալ խաղողի այգիների միջով: Թուրքերն ում որ նկատեցին՝ գնդակահարեցին տեղն ու տեղը, կամ մորթոտեցին տներում: Շատ ընտանիքներ անասելի ողբերգություն ապրեցին: Քսանութամյա Հրանտ Խաչատրյանը փորձեց հիվանդ մորն ազատել, բայց երկուսն էլ զոհվեցին: Էդիկ Ավանեսյանը ևս, մահն աչքի առաջ պահած, նույնպես փորձեց փրկել ծնողներին: Սակայն ապանվեցին ոչ միայն նրանք, այլև Էդիկի հորեղբոր տղաները, փեսան: Թվով ինը հոգի: Ո՞րն ասեմ, ո՞րը թողնեմ: Պայքարի այս տարիներին միայն Կարաչինարը կորցրեց ավելի քան հարյուր խաղաղ բնակիչ: Հենց այս վերջին մեկ տարում ինչքան զոհեր տվեցինք: Սպանվեցին Արկադյա Չաքարյանի 8—10 տարեկան երկու տղաները: Չոհվեց տասըվեցամյա Վրեժ Սահակյանը, որը վերջին կես տարում կովոմ էր ֆիդայիների շարքերում: Ինչպե՞ս չհիշեմ երեսուցյամյա Յուրի Հակոբյանին: Առյուծասիրտ տղա էր, շարժման առաջամարտիկներից: Ֆիդայիների հետ գաղտնի գնացել էր Շեֆեկ՝ հետախուզության: Մտան թուրքերի դատարկ խրամատը: Թշնամու պահակալին հերթափոխն ուր-որ է պիտի գար: Մոտեցան յոթ թուրք: Տղերքը բոլորին էլ ոչընչացրին նոնակներով: Մերոնց թվաց,

թե վտանգն անցել է: Բայց, ճակատագրի չար կամքով թե պատահականորեն, ուշացած խրամատին են մոտենում մի քանի թուրքեր և, շրջանցելով այն, թիկունքից հարվածում մեր տղաներին: Յուրան սպանվում է: Կատաղի կովից հետո է հաջողվում գյուղ բերել քաջի դիակը: Այսպիսի տղաներով էր անպարտ մեր Կարաչինարը, որն ստիպված լքեցինք անպատվաբեր ձևով, անդառնալի կորուստներ տալով:

... Մի ժամից հասանք Գյուլիստան: Եվ այնտեղ իմացանք, որ այդ մի ժամում թըշնամին գրավել էր ոչ միայն Կարաչինարը, այլև՝ Վերիշենն ու Շահումյանովսկը: Մեզ ուղարկեցին Նապատ բերդը: Գյուղում և բերդում ասեղ զցելու տեղ չկար, հավաքվում էր շրջանի ամբողջ բնակչությունը: Բայց այստեղ էլ դադար չունեցանք: Թուրքերը մոտեցան Գյուլիստանին: Մեկը չըկար, որ կազմակերպեր բազմահազար մարդկանց: Չէ՞ որ այս գյուղն այնպիսի մի դիրք ունի, որ կազմակերպված դիմադրության դեպքում թշնամին երբեք չէր մտնի այնտեղ: Հիմա Գյուլիստանի դիրքի անառիկությունը թուրքին է ծառայում: Անհասկանալի բաներ կատարվեցին: Այնպես էլ չիմացանք, թե ինչու լոնցին մեր հաուրիցները, գրահամեքենաները, «Գրադը»: Մի պատասխան կրակոց անգամ չեղավ: Մինչդեռ Շահումյանն անհամեմատ ավելի հեշտ էր պաշտպանելը, քան կրկին ետ գրավելը:

Փախանք անտառները: Վեց օր ու գիշեր տևեց մեր դժոխային ճանապարհը: Լուսադեմին հասանք վարարած մի գետի: Ուժասպառ մարդկանց համար շատ դժվար խնդիր էր գետանցումը: Մի ջահել կնոջ ձեռքից գրկի երեխան ընկավ գետը, և հուսահատ անգորությունից խելագարվող մոր աչքի առաջ հոսանքը քշեց-տարավ մանկանը: Մի ծեր կին էլ խեղդվեց: Գյուլիստանից մինչև Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղ հասնելը ևս երեսուցյոթ շահումյանցի մահացավ. որը՝ սովից, որն՝ ու-

ժասպառությունից, որը ծեր էր կամ ծանր հիվանդ: Հղի կանայք էլ կային: Մի մասին մի կերպ տեղավորեցին ճողում, ոմանք էլ մնացին անթաղ: Շատերն էլ անհետ կորան անտառներում: Թե ի՞նչ եղան՝ ասածուն է հայտնի:

Հիմա շահումյանցիներս մեծ մասով երևանում ենք: Այստեղ էլ շատ բան անկազմակերպ է: Անտերության զգացումը տանջում-կեղեքում է մեզ: Այսպես եթե շարունակվի, մենք էլ ենք ցրվելու աշխարհով մեկ: Երբ ամեն օր մեր արծիվները ետ էին մղում թշնամու գրոհները՝ հերոս էինք: Իսկ երբ անտեր-անպաշտպան մնացած ժողովուրդը մահից փրկվելու համար փախավ թշնամական տանկերի փողերի տակ՝ հանկարծ վա՛տը դարձանք: Բա եղա՞վ: Ինչո՞ւ չեն ուզում մեզ հասկանալ: Չէ, ստիպված գնալու ենք ռուսաստաններ և օտարի լծի տակ տառապելու քարշ ենք տալու մեր խղճուկ գոյությունը: Կորսվել է հավատը Հայաստանի և մեր տեղական իշխանությունների նկատմամբ: Կվերականգնվի՞ այդ հավատը... Գոնե երեխաներին տեղավորեն, տղերքը վերադառնան կովելու: Կամ կազատագրենք մեր հողը, կամ երջանկություն կունենանք այնտեղ մեռնելու և խառնվելու մեր պապերի հողին: Բայց այս ամենի համար մեղավորները պիտի պատժվեն՝ ժողովրդի արդար գայրուցթի դատաստանով: Չէ, մեր Շահումյանը պիտի գրավվի: Մոռվի երկու լանջերը հուսալի թիկունք պիտի լինեն իրար: Այլ կերպ ապրել չի լինի: Ամեն օր կովելով չես ապրի: Անվտանգության երաշխիք է պետք: Այս մի քանի շաբաթն էլ լիովի հերիք էր՝ զգալու, որ անհայրենիք մարդը ամենադժբախտ արարածն է աշխարհում: Մենք մեր հողն ենք ուզում: Մենք մեր հայրենիքն ենք ուզում՝ թեկուզ թալանված, ավերված, վիրավոր: Մենք կրուժենք նրան: Միայն Հայրենիքը կրուժի մեր վերքերը...

Գրի առավ Ռուբեն ԳՐԻԳՈՐՅԱՆԸ